

### 8. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՑ

Ներկայ յունիսի 2-ին Քիչնեռում կատարուել է նոյն թեմի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանի եպիսկոպոս ձեռնադրուելու քանուեհնգամեայ յօրեւեանը. այս մասին տեղական ոռու «Եսսարածութ» թերթը տպել է նորա մեծափիր պատկերը և մի խիստ համակրական յօդուած, որ թարգմանարար առաջ ենք բերում այստեղ.

«Ա. Պ. Բուրգ, Սոսկուա, Օդէսա, Քիչնև, Բելցքաղաքների, Խրիմի թերթկղուր, Նոր Նախիջևանի և Նախիջևան-Բեսարայի հայ թեմի հայկական գաղութները 1904 թ. յունիսի ճ-ին տօնում են իրանց յարգելի թեմական առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի քանուեհնգամեայ յօրեւեանը:

Այդ օրը լրանում է նորին բարձր սրբազնութեան եպիսկոպոս ձեռնադրուելու 25, իսկ ծննդեան 60 տարին, որ և իւր անուանակոչութիւնն է.

Սրբազնը կատարելապէս յարգուած է իւր հօտից և ստորադրեալ հոգեորականութիւննից, ինչպէս արդարադատ առաջնորդ, եկեղեցու շահերի պաշտպան և որպէս վերին աստիճանի գթասիրա և բարի մարդ, Բացի դորանից, նա յայտնի է և որպէս բարեգործ. Օգնել թշուառին, սրբել որբացած ընտանիքի արցունքները, օգնել խեղճ ուսանողին իւր ուսումն աւարտելու և այն—առանց կրօնի և ազգութեան խորութեան, Ներսէս արքեպիսկոպոսի իսկական կոչումն են կազմում: Նա նպաստում է թշուառ մարդկութեան խորին համոզմամբ, և ոչ թէ ցուցամոլութեան նպատակով և օգնելով դժբաղդներին, Ներսէս սրբազնը միշտ միմիթարում է խնդրողին և հանգըստացնում նորան, որը գուցէ արդէն յուսահատութեան էր հասել գոյութեան կուռի մէջ: Իւր խօսքով և անձնական օրինակով սրբազնը ազգեցութիւն է գործել նոյնպէս ունեսոր հայերի վերայ, մղելով նոցա դէպի կարօտաւոր փոքր եղբօր օդ-նելու քրիստոնէական ողորմածութիւնը:

Նորին բարձր սրբազնութեան ջանքերի շնորհիւ, Քիչնև քաղաքում 1902 թ. հիմնուեց հայ արքատների հսկաբարձութիւն:

Ներսէս Արքեպիսկոպոսը ծնուել է 1844 թուին Վաղարշապատում, Երևանի նահանգում. իւր ուսումն աւարտելով Ա. Էջմիածնի բարձրագոյն հոգևոր դպրոցում, որ այժմ ճեմարան է դարձած, վարդապետ ձեռնադրուեց 1865 թուին, իսկ եպիսկոպոս ձեռնադրուեց 1879 թուին նորին սրբութիւն ամենայն Հայոց Պատրիարք կաթուղիկոս Գէորգ Դիկոց: Վարել է զանազան պաշտօններ, ի միջի այլոց, 25 տարի շարունակ եղել է Հայոց ս. սինօդի անդամ և գանձապահ: Այնուհետև վարել է Երևանի հայ թեմի առաջնորդի պաշտօն, որտեղից բարձրագոյն հրամանով 1899 թուին նշանակուեց իւր այժմեան՝ Նոր-

Նախիջևանի և Թեսարաբիսյի թեմի, Ռուսաստանի ամենամեծ քեմի՝ առաջնորդի պաշտօնում, — պարզևատրութեալ ս. Ստանիլաւի օրդինով: Նորին բարձր սրբազնութիւնը ունի նաև ուրիշ պարզւներ:

Ցաւում ենք, որ նորին բարձր սրբազնութեան առանձին համեստութեան պատճառով մենք զբկուած ենք նորա բագարդիւն գործունէութեան մասին կարևոր նիւթեր ձեռքի տակ ունենալուց, որովէնտես նորին բարձր սրբազնութիւնը այն հոգեորականներից չէ, որոնք իւրեանց գործունէութիւնը հոչակենու համար առանձին գործակալներ են ունենում: Յայտնի է որ նա միշտ համեստօրէն և գործի համար գործող մարդ է եղել և ոչ ի ցոյցս մարդկան:

Վերոյիշեալ ռուս լրագրի յօդուածին մենք կաւելացնենք, որ անցեալ կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ Կովկասի հայ ինտէլիգէնցիայի մի լուրջ մտածի կաթուղիկոսական կանդիտատաներից մէկը համարւում էր սրբազան Ներսէս Արքեպիսկոպոս:

### ՄՐՑԱՆԱԿԱԲԱՋԽՈՒԹԻՒՆ

Մեզ հաղորդում են Կ. Պօլսից, որ անցեալները տեղի է ունեցել այնտեղ՝ Սահակ-Մեսորովպեան Մրցանակի Յանձնաժողովի ձեռքով ընտրելագոյն քարոզների մրցանակաբաշխութիւնը: 133 հատ կեղծանունով առաջարկուած քարոզներից առաջնակարդ մրցանակի են արժանացել քսաններկուար, որոնցից միայն մէկի հեղինակն է Ռուսաստանցի հայ հոգեորական, այն է Բագուկի ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբան արժ. Հ. Ներսէս քահ. Տէր կարապետեանցը: Քարոզի նիւթն է Ժամանակակից Յարութեանց, որ ասուած է յիշեալ եկեղեցում: